

**ՀՀ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

Վարդան ԲՈՍՏԱՆՁՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գևորգ ՄԻՆԱՍՅԱՆ

ԵՊՀ ՏԿ ֆակուլտետի ասպիրանտ

Բանալի բառեր. պետական բյուջե, բյուջետային եկամուտներ, բյուջետային ծախսեր, բյուջետային դեֆիցիտ, կառուցվածքային և ցիկլային դեֆիցիտ

Պետության կողմից վարվող հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության առավել ամբողջական գնահատումը և այդ քաղաքականության մակրոհետևանքների բացահայտումը կապված են որոշ խոչընդոտների հետ, որոնց հաղթահարման նպատակով, մեր կարծիքով, առաջին հերթին անհրաժեշտ է տարանջատել հարկաբյուջետային քաղաքականության՝ հայեցողական և ոչ հայեցողական որոշումներով պայմանավորված փոփոխությունները: Նշենք, որ ոչ հայեցողական որոշումներով պայմանավորված փոփոխությունները մասնագետների շրջանում ընդունված է անվանել նաև ավտոմատ կայունարարների ներգործությամբ տեղի ունեցող փոփոխություններ:

Հայեցողական հարկաբյուջետային քաղաքականությունն, ըստ էության, պետական ծախսերի և հարկային մուտքերի մտացված փոփոխությունն է՝ ուղղված տնտեսական աճի, զբաղվածության և գնաճի նպատակային ցուցանիշների ապահովմանը: Տնտեսական վերելքի փուլում պետությունները հիմնականում վարում են հավելյալ պահանջարկի արգելակմանը և գների կայունության պահպանմանը միտված զսպողական հարկաբյուջետային քաղաքականություն, ինչը դրսևորվում է պետական ծախսերի կրճատման և հարկային մուտքերի ավելացման միջոցառումների իրականացմամբ: Տնտեսական անկման փուլում, պետական ծախսերի ավելացման և հարկային մուտքերի կրճատման ճանապարհով, հարկաբյուջետային քաղաքականությունն առավելապես կրում է ընդլայնողական բնույթ՝ ուղղվելով ամբողջական պահանջարկի մեծացմանը և տնտեսական զարգացման արագացմանը:

Ընդհանուր տնտեսական քաղաքականությունից անկախ ոչ հայեցողական հակաբյուջետային քաղաքականությունը հիմնված է այնպիսի շուկայական մեխանիզմների վրա (պրոգրեսիվ հարկային համակարգ, գործազրկության նպաստներ, սոցիալական վճարներ և այլն), որոնք, ինքնակարգավորվող ռեժիմով արձագանքելով տնտեսական իրավիճակի փոփոխությանը, նպաստում են տնտեսության ցիկլային տատանումների հարթեցմանը: Ընդ որում, եթե հայեցողական հարկաբյուջետային քաղա-

քականության ազդեցությունը կարելի է նկատել միայն որոշակի ժամանակային լագից հետո, իսկ դրա արդյունավետությունը մեծապես պայմանավորված է տնտեսական իրավիճակներին ժամանակին արձագանքելու կարողությամբ, ապա ավտոմատ կայունարարները գործում են անմիջապես, և այս դեպքում գրեթե բացակայում է ժամանակային լագը, որ ընկած է ընդունվող որոշումների և ակնկալվող արդյունքների միջև:

Հարկ է նշել, որ պետական բյուջեն, անկախ դրա արդյունավետության ապահովմանն ուղղված կառավարողների ջանքերից, ենթարկվում է տնտեսության ցիկլային տատանումների ազդեցությանն, ինչը, բնականաբար, թույլ չի տալիս հիմնվելով միայն բյուջեի հիմնական ցուցանիշների վրա իրականացնել վարվող հարկաբյուջետային քաղաքականության ամբողջական վերլուծություն և գնահատում: Այդ իսկ պատճառով, նպատակահարմար է բյուջեի արդյունավետությունը դիտարկել երկու բաղադրիչների տեսանկյունից, որոնցից մեկը կարտացոլի հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ ընդունվող հայեցողական որոշումների, իսկ մյուսը՝ ավտոմատ կայունարարների ազդեցությունը: Հայտնի է, որ այս առումով հաճախ առաջնորդվում են բյուջետային դեֆիցիտի կամ ավելցուկի ցուցանիշներով, սակայն այդպիսի վերլուծության արդյունքները կարող են էականորեն տարբերվել փաստացի իրավիճակը բնութագրող գնահատականներից: Տնտեսության վրա ցիկլային տատանումների ազդեցությունը գնահատելու համար, պետական բյուջեի ընդհանուր հաշվեկշիռը կարելի է ներկայացնել ցիկլից ճշգրտված և ցիկլային հաշվեկշիռների հանրագումարի տեսքով.

$$OB_t = CAB_t + CB_t \quad \text{որտեղ՝}$$

OB_t -ը բյուջեի ընդհանուր հաշվեկշիռն է t -րդ տարում,

CAB_t -ը՝ ցիկլից ճշգրտված հաշվեկշիռը t -րդ տարում կամ ընդհանուր հաշվեկշռի այն մասը, որ կրում է հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ ընդունվող հայեցողական որոշումների ազդեցությունը,

CB_t -ը՝ ցիկլային հաշվեկշիռը t -րդ տարում կամ ընդհանուր հաշվեկշռի այն մասը, որ առաջանում է ավտոմատ կայունարարների ներգործությամբ:

Ցիկլից ճշգրտված հաշվեկշիռների տարբերությունը՝

$(\Delta CAB = CAB_t - CAB_{t-1})$, որն ընդունված է անվանել հարկաբյուջետային ազդակի ցուցանիշ, բնութագրում է կառավարության կողմից վարվող հայեցողական հարկաբյուջետային քաղաքականության ազդեցու-

թյունը ամբողջական պահանջարկի և տնտեսական աճի վրա: Եթե նշված ցուցանիշը զրո է կամ ձգտում է զրոյի, նշանակում է, որ պետությունը տնտեսությունից հավաքագրել է այնքան եկամուտ, որքան հնարավոր է եղել փաստացի ՀՆԱ-ի տվյալ աճի պայմաններում և միաժամանակ կատարել այնքան ծախս, որքան անհրաժեշտ է եղել պոտենցիալ ՀՆԱ-ի աճի տվյալ մակարդակի ապահովման համար: Մյուս կողմից, եթե հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը բացասական է, նշանակում է, որ պետությունն այդ ժամանակաշրջանում իր ծախսային և/կամ եկամտային քաղաքականությամբ խթանել է ամբողջական պահանջարկը, իսկ հակառակ դեպքում՝ զսպել այն ՀՆԱ-ի փաստացի և պոտենցիալ մակարդակների շեղումը նվազեցնելու և ավելցուկային պահանջարկի հետևանքով ձևավորված գնաճային ճնշումները չեզոքացնելու համար:

Ցիկլային հաշվեկշիռների տարբերությունը ($\Delta CB = CB_t - CB_{t-1}$), որը ցույց է տալիս տնտեսության մեջ ավտոմատ կայունարարների ներգործությամբ տեղի ունեցող փոփոխությունները, բնութագրում է ոչ հայեցողական հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի և տնտեսական աճի վրա: Նշված ցուցանիշի բացասական մեծությունը խոսում է ոչ հայեցողական հարկաբյուջետային քաղաքականության ընդլայնողական, իսկ դրական մեծությունը՝ զսպողական բնույթի մասին: Դա, բնականաբար, պայմանավորված է տնտեսական վերելքի փուլում գործարար ակտիվության բնույթով որոշվող բյուջետային եկամուտների ինքնաբերաբար ավելացմամբ և առանձին ծախսային հոդվածների կրճատմամբ, իսկ տնտեսական անկման փուլում, հակառակը, բյուջեի եկամտային մասի կրճատմամբ և ծախսային մասի ավելացմամբ:

Կառուցվածքային դեֆիցիտի մեծությունը, որպես կանոն, ընդունված է գնահատել հետևյալ բանաձևով¹³.

$$CAB_t = R_t \left(\frac{Y_t^p}{Y_t} \right)^{\varepsilon_{R,gap}} - G_t \left(\frac{Y_t^p}{Y_t} \right)^{\varepsilon_{G,gap}}, \quad \text{որտեղ՝}$$

R_t -ը և G_t -ը համապատասխանաբար բյուջետային եկամուտների և ծախսերի փաստացի մակարդակներն են t -րդ տարում,

Y_t^p -ը՝ ՀՆԱ-ի փաստացի մակարդակը t -րդ տարում, իսկ Y_t^p -ը՝ ՀՆԱ-ի պոտենցիալ մակարդակը t -րդ տարում կամ այլ կերպ ասած՝ ՀՆԱ-ի այն ծավալը, որ կարելի էր արտադրել ռեսուրսների լրիվ զբաղվածության և կայուն գնաճի ապահովման պայմաններում,

¹³ N.Girouard, C.Andre, Measuring Cyclically Adjusted Budget Balances for OECD Countries, OECD Economics Department Working Papers, No. 434, 2005

$\varepsilon_{R,gap}$ -ը և $\varepsilon_{G,gap}$ -ը՝ բյուջեի եկամուտների և ծախսերի առաձգականությունները ՀՆԱ-ի ճեղքվածքի նկատմամբ:

Ըստ այդմ, հարկաբյուջետային ազդակի և ավտոմատ կայունարարների գնահատականների կառուցման գործընթացը նախ և առաջ ենթադրում է պոտենցիալ ՀՆԱ-ի և դրա ճեղքվածքի գնահատում, որն առանցքային նշանակություն ունի գնաճային ճնշումներ չառաջացնող տնտեսական աճի որոշման և արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության մշակման ու իրականացման համար: Ներկայացված ուսումնասիրությունում ՀՆԱ-ի պոտենցիալ մակարդակը գնահատվել է Հոդրիկ-Պրեսկոտի ֆիլտրի և արտադրական ֆունկցիայի եղանակներով: Ընդ որում, երկու դեպքում էլ պոտենցիալ ՀՆԱ-ը գնահատվել է և՛ անվանական, և՛ իրական արտահայտությամբ (2005 թվականի միջին տարեկան գներով): Առաջարկված մոտեցմամբ կառուցվածքային դեֆիցիտի հաշվարկման բանաձևում կիրառվում է միայն փաստացի և պոտենցիալ ՀՆԱ-երի հարաբերությունը, ուստի էական նշանակություն չունի, թե պոտենցիալ ՀՆԱ-ի որ շարքն է օգտագործվում անհրաժեշտ ցուցանիշների հաշվարկման համար:

Հոդրիկ-Պրեսկոտի (HP) ֆիլտրի դեպքում վերլուծությունը կատարվել է շուկայական և հիմնական գներով ՀՆԱ-ի 2000-2015թթ. եռամսյակային տվյալներով¹⁴ Eviews վիճակագրական փաթեթի CensusX-12 ծրագրի միջոցով, դրանք նախապես սեզոնայնորեն հարթեցնելով: Պոտենցիալ ՀՆԱ-ի գնահատումն արտադրական ֆունկցիայի եղանակով կատարվել է զբաղվածության, կապիտալի պաշարի և արտադրողականության սեզոնայնորեն հարթեցված, ինչպես նաև HP ֆիլտրման արդյունքում ստացված ցուցանիշների հիման վրա¹⁵ Կոբբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայում աշխատուժի առաձգականության գործակիցն ընդունելով 0.43¹⁶:

Հարկաբյուջետային ազդակի և ավտոմատ կայունարարների գնահատման գործընթացի հաջորդ փուլը բյուջետային եկամուտների և ծախ-


¹⁴Շուկայական գներով ՀՆԱ-ի եռամսյակային տվյալները վերցվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների շտեմարանից, իսկ հիմնական գներով ՀՆԱ-ն հաշվարկվել է իրական ծավալի ինդեքսների հիման վրա:

¹⁵Զբաղվածության եռամսյակային տվյալները վերցվել են ՀՀ ԿԲ-ից, իսկ կապիտալի և արտադրողականության ցուցանիշները ստացվել են մեր կողմից կատարված հաշվարկների արդյունքում:

¹⁶Աշխատուժի առաձգականության գործակիցը հաշվարկվել է ՀՀ վերաբերյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության և ՀՆԱ-ի հարաբերակցության տարբեր տարիների ցուցանիշների միջինացման միջոցով: <https://goo.gl/kPVO5l>

սերի առաձգականության գնահատումն է գործարար ակտիվության տատանումների նկատմամբ, որը մոտարկվում է ՀՆԱ-ի ճեղքածքի միջոցով: Բյուջետային ծախսերի առումով ավտոմատ կայունարարների միջոցով պայմանավորված ազդեցության հիմնական լծակը, որպես կանոն, գործազրկության նպաստներն են: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում 2014 թվականից գործազրկության համար տրամադրվող նպաստների համակարգն այլևս չի գործում, իսկ մինչ այդ էլ դրանց տեսակարար կշիռն ընդհանուր բյուջետային ծախսերի կազմում եղել է աննշան, վերլուծությունում բյուջետային ծախսերի առաձգականության գործակիցը ՀՆԱ-ի ճեղքվածքի նկատմամբ հավասարեցվել է զրոյի: Գործարար ակտիվության տատանումների նկատմամբ բյուջետային եկամուտների առաձգականության գործակիցը գնահատվել է համապատասխան մեթոդաբանությամբ¹⁷, որի արդյունքում ստացվել է ցուցանիշի 0.91-ին հավասար մեծություն:


ՀՆԱ-ի ճեղքվածքի, բյուջետային եկամուտների և ծախսերի առաձգականության գործակիցների գնահատումից հետո կատարվել է բյուջեի ցիկլային և կառուցվածքային դեֆիցիտների, ինչպես նաև հարկաբյուջետային ազդակներով և ավտոմատ կայունարարներով պայմանավորված փոփոխությունների մեծությունները (տես գծապատկերներ 1 և 2):



Գծապատկեր 1. Բյուջեի ընդհանուր, կառուցվածքային և ցիկլային դեֆիցիտների դինամիկան 2000-2015թթ.

¹⁷ F. Bornhorst and G. Dobrescu, When and How to Adjust Beyond the Business Cycle? A Guide to Structural Fiscal Balances, Fiscal Affairs Department of IMF, Washington, 2011, էջ 7

ԱՅԼԸՆՏՐԱՆՔ Գիտական հանդես



Գծապատկեր 2. Հարկաբյուջետային ազդակի և ավտոմատ կայունարարների դինամիկան 2000-2015թթ.

Ներկայացված դինամիկ շարքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում բյուջետային դեֆիցիտի ցիկլային բաղադրիչը կազմում է ընդհանուր դեֆիցիտի աննշան մասը, ինչը նշանակում է որ ավտոմատ կայունարարների համակարգը հանրապետությունում լիարժեքորեն չի գործում, և հարկաբյուջետային քաղաքականությունն առավելապես կրում է հայեցողական բնույթ: Բյուջեի ցիկլային դեֆիցիտի մեծությունը որոշակիորեն նկատելի է դարձել 2007-2009 թվականների ընթացքում, երբ ՀՆԱ-ի փաստացի մակարդակի շեղումը պոտենցիալից գտնվել է առավելագույնի սահմաններում, սակայն մնացած տարիների ընթացքում այն եղել է անհամեմատ ավելի փոքր և չի գերազանցել ՀՆԱ-ի 1 տոկոսը:

Ավտոմատ կայունարարների գործոնով պայամանավորված նման ազդեցությունը կարելի է համարել օրինաչափ, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հարկային համակարգի պրոգրեսիվությունը դրսևորվում է միայն եկամտային հարկի մասով, իսկ բյուջետային ծախսերի մասով ավտոմատ կայունարարների գործելու հիմնական լծակը՝ գործազրկության նպաստների համակարգն, ընդհանրապես բացակայում է: Այդ վարքագիծն առավել տրամաբանական է դառնում տնտեսության ստվերային հատվածի զգալի չափերի և հարկային եկամուտների թերհավաքագրման պայմաններում, որոնք իրենց հերթին նվազեցնում են ավտոմատ կայունարարների ազդեցության մեծությունը և նրանց դերակատարությունը տնտեսության ցիկլային տատանումները մեղմելու գործում:

Հարկաբյուջետային ազդակի և ավտոմատ կայունարարների գնահատականները ցույց են տալիս, որ կառավարության կողմից վարվող

հարկաբյուջետային քաղաքականությունը դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում եղել է բավական տատանողական՝ պարբերաբար կրելով ցիկլային և հակացիկլային բնույթ: Այսպես, 2001-2003թթ. ընթացքում հարկաբյուջետային ազդակի դրական ցուցանիշները խոսում են այն մասին, որ նշված ժամանակահատվածում հարկաբյուջետային քաղաքականությունը կրել է զսպողական բնույթ, ինչի արդյունքում բյուջեի և՛ ընդհանուր, և՛ կառուցվածքային դեֆիցիտները ՅՆԱ-ի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ շարունակաբար նվազել են՝ 2003 թվականին կազմելով համապատասխանաբար -1.3 և -0.9 տոկոս: 2004-2006թթ. ընթացքում, երբ տնտեսությունը գործում էր իր ներուժային հնարավորությունների սահմաններում, և ՅՆԱ-ի փաստացի մակարդակի շեղումը պոտենցիալից աննշան էր, բյուջեի ընդհանուր և կառուցվածքային դեֆիցիտների մեծությունները շարունակել են մնալ ցածր մակարդակի վրա՝ պայմանավորելով հարկաբյուջետային քաղաքականության չեզոք բնույթը, այսինքն՝ չուղղելով այն ո՛չ տնտեսական աճի խթանմանը, ո՛չ էլ դրա զսպմանը:

ՅՆԱ-ի փաստացի մակարդակը 2007 թվականից սկսեց զգալիորեն գերազանցել իր պոտենցիալ մակարդակն, ինը հանգեցրեց բյուջեի կառուցվածքային դեֆիցիտի մեծության աստիճանաբար աճի: Այդպիսի զարգացումն, ըստ էության, հարկաբյուջետային քաղաքականությանը հաղորդեց ընդլայնողական բնույթ և էլ ավելի նպաստեց ֆինանսական մեծ ներհոսքով պայմանավորված ամբողջական պահանջարկի առանց այն էլ աննախադեպ աճին: Արդյունքում, տնտեսության "գերտաքացումը" տեղի ունեցավ ավելի մեծ արագությամբ և ավելի մեծ ուժգնությամբ, իսկ տնտեսական անկումն եղավ ավելի կտրուկ և ավելի խորը: Մինչդեռ, տրամաբանությունը հուշում է, որ կառավարությունը նշված ժամանակահատվածում իր բյուջետային լծակները պետք է ուղղեր ամբողջական պահանջարկի և տնտեսական աճի զսպմանը, ինչը թույլ կտար ձևավորել համապատասխան հակացիկլային բուֆերներ և օգտագործել դրանք համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները մեղմելու համար:

Ճգնաժամային տարիների ընթացքում կառավարության վարած հարկաբյուջետային քաղաքականությունը ձեռք բերեց էլ ավելի ընդլայնողական բնույթ, ինչն արձանագրված տնտեսական անկման հետ միասին հանգեցրեց բյուջետային դեֆիցիտ/ՅՆԱ և կառուցվածքային դեֆիցիտ/ՅՆԱ հարաբերակցությունների կտրուկ աճին, իսկ հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը բացարձակ մեծությամբ գրանցեց դիտարկվող ժամանակաշրջանի առավելագույն արժեքը՝ հասնելով 4.1-ի: 2010 թվա-

կանից սկսած, հարկաբյուջետային և մակրոտնտեսական կայունությունը չվտանգելու նկատառումներից ելնելով, կառավարությունը կրկին հարկաբյուջետային քաղաքականությանը հաղորդեց զսպողական բնույթ, թեև այդ ժամանակահատվածում ՀՆԱ-ի փաստացի մակարդակը դեռևս շարունակում էր ցածր մնալ իր պոտենցիալ մակարդակից, ինչը նշանակում է, որ կառավարությունը կարող էր հետաձգել հարկաբյուջետային կոնսոլիդացման գործընթացի իրականացումը և շարունակել նպաստել տնտեսության զարգացմանը:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ ՀՀ-ում հարկաբյուջետային քաղաքականությունը հիմնականում կրում է հայեցողական բնույթ, իսկ ցիկլային դեֆիցիտի տեսակարար կշիռն ընդհանուր բյուջետային դեֆիցիտի կառուցվածքում բավական փոքր է: Այս ամենը հետևանք է հարկային համակարգի ոչ բավարար պրոգրեսիվության, հարկային եկամուտների թերիավաքազման, տնտեսության ստվերային հատվածի զգալի չափերի, գործազրկության դեմ պայքարի հարցում պետական համակարգված մոտեցման բացակայության և բազմաթիվ այլ գործոնների, որոնք արգելակում են ավտոմատ կայունարարների գործունեությունը և նվազեցնում նրանց դերակատարությունը տնտեսության ցիկլային տատանումները հարթելու գործում: Հարկաբյուջետային ազդակի և ավտոմատ կայունարարների գնահատականների վերլուծությունն իր հերթին ցույց է տալիս, որ հարկաբյուջետային քաղաքականությունը շատ դեպքերում եղել է անարդյունավետ՝ իր բնույթով հանգեցնելով տնտեսական անկման խորացման և տնտեսական զարգացման գործընթացների սառեցման:

Վարդան ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, Գևորգ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության գնահատման հիմնախնդիրները

Բանալի բառեր. պետական բյուջե, բյուջետային եկամուտներ, բյուջետային ծախսեր, բյուջետային դեֆիցիտ, կառուցվածքային և ցիկլային դեֆիցիտ

Հոդված նվիրված է ՀՀ կառավարության կողմից վարվող հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության վերլուծությանը և այդ ուղղությամբ նոր մոտեցումների առաջարկմանը: Աշխատանքում գնահատվել են բյուջետային դեֆիցիտի կառուցվածքային և ցիկլային բաղադրիչները և ուսումնասիրվել են դրանց մեծությունները պայմանավորող գործոնները: Գնահատվել են նաև հարկաբյուջետային ազդակի և ավտոմատ կայունարարների ազդեցությամբ պայմանավորված փոփոխությունները:

Вардан БОСТАНДЖЯН, Геворг МИНАСЯН

Проблемы оценки эффективности фискальной политики в Республики Армения

Ключевые слова: государственный бюджет, доходы бюджета, расходы бюджета, бюджетный дефицит, структурный и циклический дефицит, фискальная политика

Статья посвящена изучению фискальной политики, проводимой правительством РА и предложению новых мер в этой области. В статье были оценены структурные и циклические компоненты бюджетного дефицита и были исследованы факторы, определяющие их значения. В статье также были оценены изменения связаны с фискальным импульсом и автоматическими стабилизаторами, что позволило выделить воздействия дискреционных и недискреционных решений фискальной политики на совокупный спрос и экономический рост.

Vardan BOSTANJYAN, Gevorg MINASYAN

The Problems of Fiscal Policy Effectiveness Estimation in the Republic of Armenia

Keywords: state budget, budget revenues, budget expenditures, budget deficit, structural and cyclical deficit, fiscal policy, automatic stabilizers, fiscal impulse

The article is devoted to the study of fiscal policy, implementing by the government of RA and to suggestion of new measures in this area. The article assessed structural and cyclical components of budget deficit and examined the factors determining their values. The article also assessed changes related to fiscal impulse and automatic stabilizers, which allowed to distinguish the impact of discretionary and non-discretionary decisions of fiscal policy on aggregate demand and economic growth.

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրված ֆինանսավորմամբ՝ 15T-5B103 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում: